ՍԱՐԳԻՍ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՍՈՒՆՆԻԱԿԱՆ ԱՐՄԱՏԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԸ 2001թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 11-Ի ԱՀԱԲԵԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՀԵՏՈ (ԱԼ-ԿԱԻԴԱ)

Իսլամական արմատական(սուննիական) գաղափարախոսությունը, որն իր ուրույն տեղն էր գտել մուսուլմանական երկրների հասարակական-քաղաքական զարգացումներում և նոր մակարդակի վրա բարձրացել 1970-ական թթ., XX-րդ դարի վերջին տասնամյակում թվում է սպառել էր իրեն, սակայն մուսուլմանական արմատական կազմակերպությունների, այդ թվում ալ-Կաիդայի գործունեության ակտիվացումը ապացուցեցին հակառակը: Այս առումով շատ կարևոր է հատկապես սուննիական արմատական գաղափարախոսության արժեհամակարգի ուսումնասիրությունը 2001թ. սեպտեմբերի 11-ի ահաբեկչական գործողություններից հետո:

Արևելքում տեղի ունեցող գործընթացները վկայում են դեմոկրատիայի տարածման անհաջող փորձի մասին (Աֆղանստան, Իրաք և այլն), որը հանդիպում է մուսուլմանական արմատական հոսանքների կատաղի դիմադրությունների: XXI-րդ դարում այդ դիմադրությունները ալ-Կաիդայի գլխավորությամբ ընդունեցին նոր ձևեր:

2001 թ-ից հետո համաշխարհային ահաբեկչությունը ալ-Կաիդայի ազդեցությամբ էական փոփոխությունների ենթարկվեց: Ալ-Կաիդան կազմակերպությունից վերաճեց շարժման: Մեծ թվով ջիհադական կազմակերպություններ սկսեցին գործել ալ-Կաիդայի նմանությամբ՝ ընդօրինակելով նրա վարքագիծը: Ուսամա բին Լադենը կարողացավ ահաբեկչությունը դիմադրության և բողոքի միջոցից վերածել արևմտյան ազդեցության դեմ պայքարի ունիվերսալ գործիքի:

Ալ-Կաիդայի գաղափարախոսությունը որևէ նոր բան չի ավելացնում ավանդական սալաֆականությանը[1]: Նրա գաղափարախոսության հիմքում ռազմական ջիհադի հայեցակարգն է, որը դիտարկվում է որպես յուրաքանչյուր մուսուլմանի պարտականություն: Ալ-Կաիդայի կողմից ջիհադի թիրախ են ընտրվել այն մուսուլմանները, որոնք խախտել են իսլամի սկզբունքները և համարվում են հավատուրացներ: Ալ-Կաիդայի գործողությունները մուսուլմանական երկրներում նպատակաուղված են աշխարհիկ վարչակարգերի վերացմանը (որոնք մեղադրվում են կոռումպացվածության, հավատուրացության, արև-

մուտքի հետ համագործակցության մեջ) և իսլամական տիպի պետությունների ստեղծմանը, քանի որ շարիաթը միայն աստվածապետության կողմնակից է:

Ալ-Կաիդան առաջին ահաբեկչական կազմակերպությունն էր, որը երբեք իր վրա պատասխանատվություն չի վերցրել ահաբեկչական գործողությունների համար (բացառությամբ 2001թ.-ի սեպտեմբերի 11-ի դեպքերը): Նրա յուրահատկությունը կայանում է նաև նրանում, որ ալ-Կաիդան կարողացավ վերահսկողություն հաստատել, կամ ամբողջապես իր ենթակայության տակ դնել նախկինում բազմաքանակ ահաբեկչական խմբավորումների, որոնք գործում էին միմյանցից անկախ: Նրանց գործողությունները, չնայած թելադրված չեն ալ-Կաիդայի կողմից, սակայն ներշնչված են նրա գաղափարախոսությամբ և շատ հաճախ օգտվում են նրա մարտավարությունից:

Այն պահից, երբ ալ-Կաիդան հաստատվեց Աֆղանստանում, գոյատևում էր լավ կազմակերպված նվիրատվություններ հավաքագրողների ցանցի և տարբեր իսլամական հովանավորների կողմից դրամական փոխանցումների շնորհիվ: Ալ-Կաիդայի համար հավաքագրված միջոցները տեղաշարժվում էին «հաուալա» դրամական փոխանցումների համակարգի միջոցով[2]:

1999 թ-ին բին Լադենը հանդիպեց լրագրողների հետ: Ավանդական սիրալիրությունների փոխանակումից հետո բին Լադենը «Կալաշնիկով» ավտոմատը ծնկին դրած անմիջապես անցնում է բուն նյութին, ամեն արտահայտությունից հետո փառաբանելով Ալլահին. «Եթե ընդդեմ հրեաների և ամերիկացիների սրբազան պատերազմի կոչը, որը նպատակ ուներ ազատագրել ալ-Աքսա մզկիթը և Քաաբա տաճարը, բնորոշվում է որպես հանցագործություն, ապա ինչ բարդություն կա պատմությանը ինձ կոչել հանցագործ»: Բին Լադենը գտնվելով մեկուսացման մեջ, փաստորեն մատնանշում է թշնամուն[3]:

Ուսամա բին Լադենը, մեծ մունիպալատոր է և միջնորդ, ով փորձում է տալ մուսուլմանական աշխարհին Մուհամմադ մարգարեի նոր կերպարը, որը լքում է Մեքքան հաղթանակով վերադառնալու համար: Աֆղանստանի ռմբակոծությունները սկսելուց հետո ստացված տեսաժապավենները մեզ հիշեցնում են իսլամի պատմությունը, նրա սկզբնավորման ժամանակահատվածը: Դա մեծ նշանակություն ունի մուսուլմանների համար, որոնք դաստիարակվել են Ղուրանի սուրահներով[4]:

Ամեն անգամ բին Լադենը փորձում է կառուցել իր անձի նույնացումը Մուհամմադ մարգարեի անձի հետ: Մարգարեն հեռացավ Մեքքայից 622 թ-ին, ենթարկվելով հետապնդումների թշնամիների կողմից և թաքնվեց Մադինայում: 8 տարի անց 630 թ-ին, նա հաղթանակած վերադարձավ Մեքքա: Բին Լադենը նույնպես լքեց Մեքքան, այսինքն Սաուդիան Արաբիան, որը նա դիտարկում էր

որպես անհավատների երկիր և հաստատվեց Սուդանում, իսկ 1996 թ-ից՝ Աֆղանստանում: «Ալ Ջազիրա» հեռուստաընկերությամբ ցուցադրվող տեսաժապավեններում, բին Լադենը ներկայանում է իր ծիու վրա նստած, և ժպտացող: Ահա այդպիսին են հասարակ մուսուլմանները պատկերացնում Մուհամմադ մարգարեին: Ամեն ինչ արվում է, որպեսզի տեղի ունենա նույնացում մարգարեի անձի հետ: Նրա օգնականներից մեկը պատմում է. «Մեզ համար նա հերոս էր, որովհետև միշտ առաջից էր գնում: Նա միշտ կարողանում էր առաջին շարքում տեղ զբաղեցնել: Նա ոչ միայն գործի համար գումար էր տալիս, նա այդ գործին նվիրվում էր ամբողջությամբ: Նա եկավ այստեղ, որպեսզի ապրի աֆղանցի գյուղացիների և արաբ մարտիկների հետ: Նա կերակուր էր պատրաստում նրանց հետ, ուտում նրանց հետ, խրամատներ փորում ինչպես նրանք: Այդպիսին էր բին Լադենի ապրելակերպը»[5]:

Իսլամի սկզբնական շրջանում մարգարեն հաղթեց հավատուրացներին և դավաճաններին, դա Մեքքայի այն բնակիչներն էին, որոնք ասում էին որ մուսուլմանների հետ են, բայց հանդես եկան նրանց դեմ: Երբ բին Լադենը այսօր խոսում է հավատուրացների մասին, նա ցանկանում է դրանով նշել այն մուսուլմաններին (հատկապես Սաուդիան Արաբիայի ղեկավարներին), որոնք արտաքինից հանդես են գալիս որպես ճշմարիտ հավատացյալներ, սակայն ներքնապես ամերիկացիների կողմից են: Բին Լադենի պատկերացմամբ արաբական և մուսուլմանական աշխարհի ղեկավարները կեղծավորներ են, կռապաշտներ, որոնք վախից կծկվում են Ամերիկայի, դարաշրջանի Հուբալի[6] առաջ: Նրա սուրը հարվածում է միաժամանակ ԱՄՆ-ին և նրա դաշնակից կառավարություններին: Նրա հարձակումը ուժ ցուցաբերեց այն կառավարություններին, որոնք պետք է ընտրեին կամ Աստծո կռապաշտ թշնամիների մեջ, կամ ճշմարիտ հավատացյալների հետ լինելը[7]:Կարելի է ևս մեկ զուգահեռ տանել: Ուղղափառ խալիֆների ժամանակաշրջանում մուսուլմանները կարողացան հաղթել այդ դարաշրջանի մեծագույն երկու կայսրությունները՝ Բյուզանդիան և Պարսկաստանը: Այժմ ջիհադի հետևանքով կործանվեց Սովետական Միությունը և հիմա ամերիկյան կայսրության հերթն է:

Ալ-Կաիդան շահագրգռված էր իրականացնել ահաբեկչական գործողություններ՝ օգտագործելով քիմիական, բիոլոգիական և ատոմային զենք, ինչպես նաև ռադիոակտիվ նյութեր: 1994 թ-ին ալ-Կաիդան փորձեց ձեռք բերել ուրան 1.5 միլիոն դոլարով, սակայն այդ գործարքը չհաջողվեց: Ալ-Կաիդան ձգտում է հասնել իր ստրատեգիական նպատակներին՝ ձեռք բերել ատոմային զենք: Ալ-Կաիդային պատկանող շենքերում հայտնաբերվել են փաստաթղթեր, որոնք պարունակում էին տեղեկություններ այդպիսի զենքի օգտագործման և

ազդեցության մասին: Ալ-Կահիդայի անդամները մշակել են բիոլոգիական զենքի օգտագործման ծրագիր և մինչև 2001 թ-ի սեպտեմբերի 11-ը հաջողություններ են ունեցել սիբիրախտի բացիլների մշակման գործում: Կենտրոնական հետախուզական վարչության նախկին տնօրեն Ջորջ Թենետը հանդես գալով կոնգրեսում նշում էր, որ «Ուսամա բին Լադենը և նրա կազմակերպությունը (ալ-Կահիդա) իրենցից ներկայացնում են առավել լուրջ և անմիջական արտաքին վտանգ ԱՄՆ-ի ազգային անվտանգությանը»: Նա նաև նշում է, որ ալ-Կահիդայի կողմից սիբիրախտի բացիլների օգտագործման վտանգը ամենահավանական խնդիրներից մեկն է, որը կարող է անհանգստություն պատճառել ԱՄՆ-ին մոտակա ժամանակներում: Ալ-Կահիդան կարող է նաև ահաբեկչություն իրականացնել օգտագործելով թունավոր գազեր: Հատուկ ծառայությունները կարծում են, որ ալ-Կահիդան ինչպես և նախկինում կփորձի առավել մեծ զոհեր պահանջող ահաբեկչություններ իրականացնել:

Ալ-Կահիդայի ի հայտ գալը դա նաև նախկին տիպի իսլամական կազմակերպությունների մեջ տեղի ունեցող ճգնաժամի ռեակցիայի արդյունք էր: Նախկին իսլամական կառույցների հանդեպ հիմնական տարբերությունը առավել մեծ շեշտադրումն է ջիհադի վրա, ռազմական պրակտիկայի վրա, ռազմական խնդիրների առաջնայնությունն է, այլ ոչ թե քաղաքական: Ջիհադը ամբողջ աշխարհին հայտարարվել է մուսուլմանների պարտականությունը:

Վերջին ժամանակներում իսլամական ահաբեկչական խմբավորումների սոցիալական հիմքը փոխվեց: Սեպտեմբերի 11-ին մասնակցած անձնազոհները նախնական հետաքննության տվյալներով հանդիսացել են հասարակության ապահովված շերտերից, որոնցից շատերը ունեցել են բարձրագույն կրթություն, գիտեին օտար լեզուներ և ծանոթ էին Արևմտյան մշակույթին:

Մինչև ալ-Կահիդայի հիմնադրումը ահաբեկչական խմբավորումները իրենց գործողությունները իրականացնում էին որևէ երկրի կամ դրանց ոչ մեծ խմբի դեմ:Սակայն ալ-Կահիդան կարողացավ լավագույնս օգտագործել մուսուլմանական ռեսուրսը (որի կորիզը կազմում էին աֆղանական պատերազմում կոփված և Պեշավարի ճամբարներում ռազմական պատրաստվածություն անցած մարդիկ), որդեգրեց ռազմական ջիհադի հայեցակարգը, և ապացուցեց որ իր միջոցներով հավասարապես կարող է պայքարել արևմտյան ռազմական, քաղաքական, ֆինանսական և գաղափարական ուժի դեմ՝ ստեղծելով միջազգային ահաբեկչական ցանց ամբողջ աշխարհով:

Ներկայումս իսլամական արմատականությունը լայն առումով վաղուց արդեն դուրս է եկել մաքուր կրոնական ուղղության սահմաններից՝ վերածվելով հասարա-քաղաքական մտքի ուղղություններից մեկը[8]:

XXI-դարում մենք տեսնում ենք միջազգային ահաբեկչության լայնամասշտաբ գլոբալ դրսևորումներ,որոնք ընդունել են անկանխատեսելի ձևեր: Պատճառը աշխարհում տեղ գտած գլոբալ ցնցումներն են, որի պատճառն է նաև այն, որ ամերիկյան վերլուծաբանների կողմից առաջ քաշված ամերիկյան հզորությունը սեպտեմբերի 11-ից հետո ապացուցեց իր խոցելիությունը: Աշխարհում տեղի է ունենում ահաբեկչության ինտերնացիոնալացում և գլոբալիզացում: Դա կարող է արմատապես ազդել ինչպես առանձին երկրների կայունության վրա, այնպես էլ իր ներգործությունն ունենալ տարածաշրջանային և նույնիսկ գլոբալ ոլորտներում:

Ակնհայտ է, որ այդ բոլոր գործընթացները իրենց ազդեցությունն են ունենալու մուսուլմանական աշխարհի և ընդհանրապես համաշխարհային գործընթացների վրա, որոշելու են մուսուլմանական աշխարհի ներքին զարգացումների և այլ քաղաքակրթական դաշտի երկրների հետ նրանց հարաբերությունների բնույթը, իսկ իսլամական ֆունդամենտալիզմը, որը XXI-րդ դարում նոր բովանդակություն ստացավ ալ-Կաիդայի շնորհիվ, կմնա իսլամական գաղափարախոսության և քաղաքական պրակտիկայի ռազմավարական ուղղություններից մեկը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.Ислам: Энциклопедический словарь, М. , 1991, п. 204, Սալաֆ. (նախնիներ) – Սալաֆիները, դրանք այն մուսուլմանական կրոնական գործիչներն են, որոնք իսլամի պատմության տարբեր ժամանակաշրջաններում հանդես էին գալիս վաղ իսլամական համայնքի (աս-սալաֆ աս-սալիհուն) ապրելակերպի ընդօրինակման կոչերով:

2.Հաուալա - Մերձավոր Արևելքում և Հարավային Ասիայում տարածված դրամական փոխանցումների ոչ պաշտոնական համակարգ, որի մեխանիզմը հետևյալն է. եթե անձը ուզում է Ա կետից որոշակի գումար ուղղարկել Բ կետ, ապա տվյալ անձը հանդիպում է Ա կետի հաուալայի ներկայացուցչի հետ և նրան տալիս գումարը: Ա կետի հաուալայի ներկայացուցիչը կապվում է Բ կետի հաուալայի ներկայացուցչի հետ և խնդրում նրան տալ նույն չափի գումար ստացողին:

3.Жаккар Р., ОЛМА-Пресс, Именем Усамы бен-Ладена, М., 2002, с. 160-161.

4.Кепель Ж, Джихад: Экспансия и закат исламизма, М., 2004, с. 163-169.

5.McCleud S., Time, http://www.time.com/time/magazine/article, May 06, 1996, The Paladin of Jihad

6.Ислам: Энциклопедический словарь, М., 1991, п. 280, Հուբալ.- Դա հին արաբական Աստված էր, որի կուռքերը կայծ Մեքքայում քարերի տեսքով: Եվ դրանից մեկն էլ գտնվում էր Քաաբայում: Հուբալը համարվում էր երեք աստվածուհիների («ալ-Լաթ, ալ-Ուզզա և Մանաթ») ամուսինը և կայծակի և անձրևի տիրակալը: Մեքքայի նվաճումից հետո Հուբալի կուռքը դուրս հանվեց Քաաբայից և ոչնչացվեց:

7.Scott Doran M., Foreign Affairs: January/February 2002, Somebody Else's Civil war, page 22-42.

8. Малышева Д., Мировая экономика и международные отношения: Исламско-фундаменталистский проект в реалиях современного мира, М., 1999, с. 108-117.

9. Тодд Э., После империи: Pax-Americana-начало конца, М., 2004, с. 8-31.